ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 19 » հունիս 2026թ. No 3578 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԹՎՈՎ 5 ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/3066-26 առ 11.06.2026թ. գրությունը և դեղերն արտադրող դեղագործական ընկերությունների գրությունները, համաձայն որոնց դեղերի արտադրությունը դադարեցվել է.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական գրանցում ստացած թվով 5 դեղերի՝ համաձայն հավելվածի, գրանցումը ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վ.Գրիգորյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին, հայտատուին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝ սույն հրամանի հավելվածում նշված 5 դեղերը հանել գրանցամատյանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2026 թվականի հունիս « 19 » - ի N 3578 - Ա հրամանի

## ՀՀ-ում գրանցումը ուժը կորցրած ճանաչելու դեղերի ցանկ

| հ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բացթողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Օտրիվին | քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) | ցողաշիթ քթի | 1մգ/մլ; 10մլ պլաստիկե սրվակ դեղաչափիչ մխոցով | ԳՍԿ Քոնսումեր Հելթքեյր ՍԱՌԼ, դե Լ`ետրազ ճանապարհ, 1260 Նիոն | Շվեյցարիա | ԳՍԿ Քոնսումեր Հելթքեյր ՍԱՌԼ, դե Լ`ետրազ ճանապարհ, 1260 Նիոն | Շվեյցարիա | ԱԴ | 21757 10.06.2026 |
| 2. | Սոլու-Մեդրոլ | մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) | դեղափոշի լիոֆիլիզացված մ/մ և ն/ե ներարկման լուծույթի | 250մգ; (1) Ակտ-Օ-Վայալ (250մգ փոշի և 4մլ լուծիչ) | Պֆայզեր Մանուֆակտուրինգ Բելգիա Ն.Վ., Ռիջկսվեգ 12, Բ-2870 Պուրս | Բելգիա | Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42 փ., Նյու Յորք 10017 | ԱՄՆ | Դ | 19887 10.06.2026 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Սոլու-Մեդրոլ | մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) | դեղափոշի լիոֆիլիզացված մ/մ և ն/ե ներարկման լուծույթի | 500մգ; (1) ապակե սրվակ փոշով և (1) ապակե սրվակ լուծչով 7,8մլ | Պֆայզեր Մանուֆակտուրինգ Բելգիա Ն.Վ., Ռիջկսվեգ 12, Բ-2870 Պուրս | Բելգիա | Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42 փ., Նյու Յորք 10017 | ԱՄՆ | Դ | 19888 10.06.2026 |
| 4. | Սոլու-Մեդրոլ | մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) | դեղափոշի լիոֆիլիզացված մ/մ և ն/ե ներարկման լուծույթի | 1000մգ; (1) ապակե սրվակ փոշով և (1) ապակե սրվակ լուծչով 15,6մլ | Պֆայզեր Մանուֆակտուրինգ Բելգիա Ն.Վ., Ռիջկսվեգ 12, Բ-2870 Պուրս | Բելգիա | Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42 փ., Նյու Յորք 10017 | ԱՄՆ | Դ | 19889 10.06.2026 |
| 5. | Օրսոտեն | օրլիստատ | դեղապատիճներ | 120մգ; (21/3x7/) բլիստերում, (21/1x21/) բլիստերում, (42/6x7/) բլիստերում, (42/2x21/) բլիստերում | ԿՌԿԱ-ՌՈՒՍ ՍՊԸ, Մոսկովսկայա փ. 50, Իստրա, Մոսկվայի շրջան, 143500 | Ռուսաստան | ԿՌԿԱ-ՌՈՒՍ ՍՊԸ, Մոսկովսկայա փ. 50, Իստրա, Մոսկվայի շրջան, 143500 | Ռուսաստան | Դ | 20324 10.06.2026 |